ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԼԻԴԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

ՀՏԴ159.9

Պողոսյան Վահե
Երևանի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ասպիրանտ,
«Զորավար Սեպուհ»[*] պատմաքաղաքական վերլուծական կենտրոնի փորձագետ
Երևան, Հայաստանի Հանրապետություն

«Կուսակցական լիդերություն» հասկացության վերաբերյալ քաղաքագիտական գրականության մեջ առկա են բավական սակավաթիվ հետազոտություններ և ուսումնասիրություններ: Կուսակցական լիդերի՝ որպես քաղաքական լիդերության բաղկացուցիչ տարր, կարևորությունը հետզհետե առավել քան կարևոր է դառնում քաղաքական մրցապայքարում: Ասվածի ապացույցն է այն, որ քաղաքական կուսակցությունները, հանդիսանալով քաղաքական համակարգերի և գործընթացի առանցքային սուբյեկտներից մեկը, գրեթե մեծամասամբ ունենում են կուսակցական լիդեր, անհատականություն, որը սեփական հատկանիշների և խարիզմայի շնորհիվ կարողանում է առաջնորդել քաղաքական կուսակցությանը և նրա հետևորդներին: Այս իմաստով, խիստ կարևորում են կուսակցական լիդերի անհատական հատկանիշների և նրա կողմից իրականացվող գործառույթների վերաբերյալ հիմնահարցի պարզաբանումը, քանի որ հենց նրանք են հանդիսանում քաղաքական կուսակցությունների լոկոմոտիվը: Տվյալ հոդվածում ներկայացրել են միջազգային և տեղական մակարդակում կուսակցական լիդերի անհատական հատկանիշների վերաբերյալ առկա հետազոտությունները և համեմատական վերլուծության միջոցով փորձել են վեր հանել նրա կողմից իրականացվող գործառույթները, որոնց արդյունավետ իրացման արդյունքում քաղաքական կուսակցությունը կարող է լուրջ հաջողություններ գրանցել:

Բանալի բառեր՝ կուսակցական լիդեր, քաղաքական ինստիտուտ, քաղաքական կուսակցություն, իշխանություն, ընտրազանգված, քաղաքական էլիտա, գործառույթ:

Ներածություն

«Կուսակցական լիդերություն» հասկացությունը՝ որպես քաղաքագիտության տեսա-մեթոդաբանական ուսումնասիրության հիմնահարց, սկսվել է ուսումնասիրվել այն ժամանակաշրջանից ի վեր, երբ քաղաքական կուսակցությունները դարձան քաղաքական գործընթացների ակտիվ սուբյեկտներ: Սակայն միևնույն ժամանակ, այդ ուսումնասիրությունները հաճախ ուղղված են նրանց իրավական և քաղաքական գործառույթների ֆորմալ չափանիշների վերլուծությանը: Հայաստանում քաղաղաքական

[*] Հոդվածը ներկայացվել է 29.07.2022
Տպագրության է երաշխավորել ք.գ.դ. պրոֆեսոր Գ.Քեռյանը: 3.08.2022:
Հոդվածը տպագրության է ընդունվել 16.08.2022:

գործընթացերի և իշխանության անձնավորման բարձր աստիճանի պայմաններում անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն այս ֆորմալ բաղադրիչները, այլև *մարդկային, սուբյեկտիվ բնութագրերը*, քանի որ առկա են զգալի թվով գործոններ, որոնք ազդում են կուսակցական վերնախավի ներկայացուցիչների ֆունկցիոնալ պարտականությունների կատարման վրա: Այս իմաստով հարկ է ուշադրություն դարձնել կուսակցական լիդերի անհատականության վրա, քանի որ այն հանդիսանում է նրանց քաղաքական գործունեության հիմնաքարերից մեկը, որի մասին բավական ուշագրավ հետազոտություններ են իրականացրել Ե. Բ. Շեստոպոլը և Ա. Վ. Սելեզնևն[1]: Մեր համոզմամբ հենց այս բաղադրիչներն են հնարավորություն տալիս ոչ միայն գնահատել կուսակցական լիդերներին, այլև համեմատել նրանց միմյանց և քաղաքական էլիտայի այլ ներկայացուցիչների հետ: Կուսակցական լիդերությունն այս բաղադրիչների պրիզմայով ուսումնասիրելիս առաջանում են հետազոտական հետևյալ լեգիտիմ հարցերը.

- Ո՞րն է առաջնային այս երևույթում՝ լիդերը, թե՞ լիդերի խաղացած դերը,
- Լիդերը բխում է իր կարգավիճակի՞ց, թե՞ անհատականությունն է, ինչն իր հերթին լիդերին օժտում է բազմաթիվ հատկանիշներով,
- Ի՞նչ է պատահում մարդու լիդերության ներուժին, եթե նրա անձը երկար ժամանակ նույնը մնա կամ, ընդհակառակը, փոխվի:

Հարցադրումների պարզաբանման համար նախ հարկ է նշել, որ քաղաքական լիդերը գործում է ուժային հարաբերությունների համակարգում և, հետևաբար, «լիդերություն» երևույթը սերտորեն կապված է որոշակի քաղաքական ինստիտուտների (տվյալ դեպքում՝ կուսակցությունների) հետ, որոնք իրենց հերթին ապահովում են տարբեր սոցիալական խմբեր շահերի պաշտպանությունն ու հավասարակշռությունը: Երբ խոսքը կուսակցական լիդերների մասին է գնում, ապա պետք է խոսել այն անձանց մասին, որոնց հետ որոշակի սոցիալական խմբեր կապում են իրենց շահերը բավարարելու հնարավորությունը: Կուսակցական լիդերը այդպիսին է ոչ միայն որոշակի անձնային հատկանիշների առկայության պատճառով (որոնք առավել հաճախ նշվում են լիդերության ֆենոմենը դիտարկելիս), այլ նաև նրանով, որ կուսակցության որոշակի մաս, իր ընտրազանգվածը նրանից հստակ գործողություններ և արդյունք է ակնկալում: Հենց այս պահանջն է շարքային քաղաքացիներին դրդում ունենալ կուսակցական լիդեր և աջակցել նրան: Սակայն այս առումով կարծում ենք, որ լիդերի անհատական որակները անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայմաններ են հաջողակ կուսակցապետի ի հայտ գալու համար:

Նյութեր և մեթոդներ

Հոդվածում արծարծվող հիմնախնդիրների քննարկման համար տեսամեթոդաբանական հիմք է հանդիսացել ռուսերեն և անգլերեն գրականությունը, իսկ հետազոտության մեթոդներից կիրառվել են կառուցվածքային-ֆունկցիոնալ և համակարգային հետազոտության մեթոդները:

---

[1] Տե՛ս ***Шестопал Е.Б., Селезневой А.В.*** Современная элита России: Политико-психологический анализ. М.: АРГАМАК-МЕДИА, 2015.

«Կուսակցական լիդերություն» հասկացության մեկնաբանման հայեցակարգերը

Գերմանացի սոցիոլոգ **Ռ.Միխելսը**, ով ուսումնասիրել է քաղաքական կուսակցությունների գործունեությունը և վերլուծել նրանց շարքային անդամների վարքագիծը, տվյալ հիմնահարցի շուրջ եկել է մի քանի կարևոր եզրակացությունների.

- Լիդերը (տվյալ դեպքում կուսակցական) պետք է հանրաճանաչ լինի հասարակության մեջ, բայց այդ ժողովրդականությունը պետք է ձեռք բերվի կուսակցական հիերարխիայի գագաթնակետին հասնելուց հետո:
- Մարդը կարող է լիդեր (կուսակցան լիդեր) դառնալ երկու ճանապարհով՝ հանրաճանաչություն ձեռք բերելով արտակուսակցական ասպարեզում, միանալ կուսակցության ղեկավարությանը կամ երկար ու հետևողական կարիերա անելու, հարգանք և համախոհներ ձեռք բերելու միջոցով[1]:

Վերջին ճանապարհը, ըստ **Ռ.Միխելսի**, առավել նախընտրելի է և կենսունակ:

Եվ չնայած տվյալ հետազոտությունից անցել է մոտ մեկ դար, և հիերարխիկ տիպի կուսակցությունները (որի մասին նա գրել է) կտրուկ փոխվել են, ներկա փուլում նրա տեսությունը մեթոդաբանական արժեք է ներկայացնում, քանի որ քաղաքական մշակույթը առհասարակ, իսկ հայկական քաղաքական մշակույթը հատկապես բնութագրվում են իշխանության անձնավորմամբ, որը քաղաքական կուսակցությունների մակարդակում արտահայտվում է վառ լիդեր առաջադրելու անհրաժեշտությամբ[2]:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ կուսակցական լիդերը լիդերության մակարդակների դասակարգման մեջ գտնվում է փոքր խմբի[3] լիդերի և քաղաքական լիդերի[4] միջակայքում, քանի որ նրա անձնական որակները, եթե ոչ հիմնարար նշանակություն ունեն ինչպես փոքր խմբի լիդերության դեպքում, ապա ավելի նշանակալից են, քան քաղաքական լիդերների համար ընդհանրապես: Այս մասին բավամսան հիմնավոր ուսումնասիրություններ կարելի է հանդիպել Դ. Վ. Օլշանսկիի աշխատություններում[5]:

Կուսակցական լիդերության հասկացության ուսումնասիրությունը իրականացնելիս պետք է հաշվի առնել նաև ամերիկացի հոգեբույժ **Դ.Մ. Բըրնսի** կողմից առաջ քաշված հայեցակարգը, որը, լիդերության էության ուսումնասիրության ժամանակ որպես դասակարգման հիմք ընդունելով լիդերի և հետևորդների հարաբերությունները, այն դասում է «տրանսակտիվ» տիպի լիդերների շարքում[6]: Այն առաջանում է, երբ անհատը ուրիշների հետ շփվելիս որոշակի նախաձեռնություն է ցուցաբերում արժեքների փոխանակման նպատակով: Այսպիսով, կուսակցական լիդերը ձգտում է մոբիլիզաց-

---

[1] Տե՛ս ***Михельс Р***. Социология политической партии в условиях демократии // Диалог. 1990. № 9. էջ 49-54, 81-86.

[2] Տե՛ս ***Ошкин В.В***. Трансформация требований к партийным лидерам (на примере творческого наследия Р. Михельса) // Симбирский научный вестник. 2012. № 4 (10). էջ 169-172.

[3] ***Փոքր խմբի լիդեր***- Լիդերության առաջին մակարդակը, որտեղ լիդերը կարողանում է իր շուրջը համախմբել մարդկանց, հանդիսանալ տվյալ խմբի ուղեղային կենտրոնը, ձևավորել տվյալ խմբի հիմնական պահանջմունքները և պաշտպանել խմբի շահերը, այլ խմբերի հետ հարաբերություններում:

[4] ***Քաղաքական լիդեր***- Լիդերության երրորդ մակարդակ, քաղաքական այն գործիչն է, որի գործունեությունը ծավալվում է իշխանական հարաբերությունների համակարգում, ի դեմս որի քաղաքական լիդերությունը ներկայացված է սոցիալական հաստատության ձևով:

[5] Տե՛ս ***Ольшанский Д.В***. Основы политической психологии. Екатеринбург: Деловая книга, 2001.

[6] Տե՛ս ***Burns J.M***. Leadership. New York: Harper & Row, 1978.

նել որոշակի սոցիալական, տնտեսական և հոգեբանական ռեսուրսներ՝ իր հետևորդների պահանջները բավարարելու համար: Հարկ է ընդգծել, որ կուսակցական լիդերությունը, թերևս, միակն է Դ. Մ. Բըրնսի տիպաբանությունից, որը պարունակում է փոխարկերպվող լիդերության զգալի ներուժ: Այլ կերպ ասած՝փոխակերպվող լիդերությունը լիդերության մակարդակ է, որտեղ և՛ լիդերը, և՛ նրա հետևորդները միմյանց հետ փոխազդելով միմյանց բարձրացնում են մոտիվացիոն ավելի բարձր մակարդակի:

Կուսակցական լիդերի դերը երկակի կառուցվածք ունի՝ մի կողմից այս պաշտոնը զբաղեցնող անձը պատասխանատու է իր ղեկավարած կուսակցության գործունեության արդյունավետության համար, իսկ մյուս կողմից՝ գլխավորը այն քաղաքական կուսակցությունների լիդերներն են, որոնք անցել են, օրինակ, օրենսդիր մարմին՝ դրանով իսկ ազդեցություն ունենալով երկրում քաղաքական գործընթացի վրա: Կուսակցության լիդերի դերի այս հատկանիշն ընկած է քաղաքական գործընթացներում նրա գործառույթների երկակիության հիմքում: Քանի որ կուսակցությունը չի կարող գոյություն ունենալ առանց իր անդամների և համակիրների, կուսակցության լիդերի դերը պահանջում է հասարակության մեջ տեղի ունեցող գործընթացների և դրանց դինամիկայի նկատմամբ զգոնության բարձրացում, ինչպես նաև իրավիճակի էության մեջ ներթափանցելու կարողություն: Ավելին, այս իմաստով ռազմավարական մտածելու ունակությունը մեծապես որոշում է հենց կուսակցական լիդեր լինելու կարողությունը: Կարևոր է նաև, որ կուսակցական լիդերի դերի հստակեցված հատկանիշը վերաբերում է ոչ միայն կուսակցության գործունեության արտաքին գործոնին: Պատմության մեջ կան բավական օրինակներ, երբ անհեռատես կուսակցական լիդերը ստիպված է եղել հրաժարական տալ՝ տեղը զիջելով ավելի հեռատես գործընկերոջը: Այս առումով ուշագրավ է Վրաստանում 2003թ. «Վարդերի հեղափոխության» լիդեր Մ. Սահակաշվիլու օրինակը: Սկզբնական հատվածում խարիզմայի շնորհիվ Մ. Սահակաշվիլին կարողացավ արմատական փոփոխություններ կատարել՝ պայքար մղելով կոռուպցիայի դեմ: Սակայն նրա ծավալած ռազմական գործողության հետևանքով Վրաստանը կորցրեց մինչ այդ ինքնավար կարգավիճակ ունեցող Հարավային Օսիան և Աբխազիան, ինչն էլ դարձավ նրա հրաժարականի պատճառը: Ուշագրավ է նաև Ուկրաինայի և Ղրղզստանի լիդերների օրինակները: Ուկրաինայում 2004թ. -ի նոյեմբերի 22-ին՝ «Նարնջագույն հեղափոխությունից» մոտ մեկ տասնամյակ անց, արտաքին քաղաքական կուրսի ընտրության համար կրկին անկայուն իրավիճակ ստեղծվեց: Պատճառը ԵՄ-ի հետ ասոցացման համաձայնագրի ստորագրման հետաձգումն էր: Հեղափոխության հետևանքով Յանուկովիչը զրկվեց իշխանությունից, իսկ Ուկրաինան, մեծ կորուստներ կրելով, ստորագրեց ԵՄ ասոցացման համաձայնագիրը: Իսկ 2005 թ. Ղրղզստանում տեղի ունեցավ «Կակաչների հեղափոխությունը», որի առաջնորդն էր Կուրմանբեկ Բակիևը: Վերջինս, սակայն, իշխանությունից հեռացվեց 2010 թվականին՝ կրկին հեղափոխության արդյունքում: Սրանք օրինակներ էին ի ցույց դնելու համար, թե ինչի կարող է հանգեցնել կուսակցական և նաև քաղաքական լիդերների անհեռատեսությունը և ոչ կոմպետենտ քաղաքականությունը քաղաքական մրցապայքարում:

Քաղաքական լիդերության վերաբերյալ քաղաքագիտական աշխատություններում ներկայացված է քաղաքական լիդերի անձի ուսումնասիրության մոտեցումների զգալի շրջանակ՝ պատմական և քաղաքական ուսումնասիրություններից մինչև զուտ հոգեբա-

նական ասպեկտի վերկուծություններ: Մենք առաջին հերթին խնդիր ունենք որոշելու այն բաղադրիչները, որոնք միասին վերցրած բավարար կլինեն կուսակցական լիդերի վերաբերյալ հստակ պատկերացում կազմելու համար: Անշուշտ, անձի կառուցվածքի բոլոր բաղադրիչները ենթարկվում են մասնագիտական ընտրության՝ քաղաքական գործչի ունեցած դերը յուրացնելու ընթացքում: Այս առումով, ինչպես նշել է **Ն.Մ. Ռակիտյանսկին**, «*անհատական հատկանիշների կառուցվածքային տարրերից ոչ բոլորն են «պատասխանատու» քաղաքական վարքագծի համար և ոչ բոլորն են դրսևորվում դրանում... Յուրաքանչյուր դեպքում քաղաքական գործչի անձի կառուցվածքը հիմնվում է որոշակի հետազոտական արդյունքի հասնելու կամ պրագմատիկ նպատակի, այնպես էլ կոնկրետ խնդիրներ լուծել վրա*»[1] : Այս առումով, իր գիտական հետազոտություններում հետարքրաշարժ տեսակետ է հայտնել նաև հոգեբան **Ե.Պ. Իլյինը**, համաձայն որի քաղաքական գործչի անձի վերլուծությունն անհնար է առանց նրա շահերի, կարիքների և դրդապատճառների պարզաբանման[2]: Այստեղից կարելի է եզրակացնել, որ վերջիններս քաղաքական հոգեբանության մեջ հասկացվում են որպես մարդու գործունեության ազդակ կամ պատճառ: Իհարկե, շատ դեպքերում անհատի մոտ միաժամանակ հայտնվում են մի քանի դրդապատճառներ՝ նրա վարքը վերածելով բազմամոտիվացված գործունեության, սակայն մոտիվներից մեկը հաճախ դրսևորվում է գերակշռող կերպով: Հենց սա է պատճառը, որ շատ հետազոտողներ մտորել են այն հարցի շուրջ, թե ի՞նչն է անհատին ձգտել տալիս դեպի իշխանության: Այսպիսով, **Մ. Հերմանը** կարծում էր, որ դրա պատճառը, ի թիվս այլոց, կարող է լինել անգիտակցական հոգեկան անհարմարությունը փոխլրացնելու ցանկությունը կամ հարգանքի անհրաժեշտությունը[3]: **Զ.Ֆրոյդը և Ա.Ադլերը** իրենց հերթին նշում էին, որ անհատը ձգտում է իշխանության՝ առաջնային սոցիալականացման շրջանում ձեռք բերած անգիտակից բարդույթների պատճառով[4]: Այստեղից հարկ ենք համարում եզրակացնել, որ իշխանություն ունենալու անհրաժեշտությունը կարող է լինել ոչ միայն փոխհատուցող, այլև գործիքային, այսինքն ուղղված անհատի այլ կարիքների բավարարմանը:

Կուսակցական լիդերի անհատական գործողությունների շարժառիթները

Կուսակցական լիդերության հիմնահարցի պարզաբանման համար անհրաժեշտ է նաև անդրադարձ կատարել անհատական գործողությունների շարժառիթներին: Այսօր քաղաքական հոգեբանության մեջ ավանդաբար առանձնացվում են երեք շարժառիթներ՝ ***իշխանություն***, ***պատկանելություն*** և ***հաջողության հասնելու*** ցանկությունը, որին իր աշխատություններում հանգամանալից կերպով անդրադարձ են կատարել Դ. Մաքքլել-

---

[1] Տե՛ս ***Ракитянский Н.М***. Личность политика: теория и методология психологического портретирования. М.: Изд-во Московского университета, 2011. էջ 73-79.

[2] Տե՛ս ***Ильин Е.П***. Мотивация и мотивы. СПб.: Питер, 2000.

[3] Տե՛ս ***Hermann M.G***. Ingredients of Leadership // Political Psychology. Contemporary Problems and Issues / Ed. M.G. Hermann. San Francisco: Jossey-Bass, 1986. էջ 175.

[4] Տե՛ս ***Фрейд З***. Психология бессознательного. М.: Просвещение, 1990.**:** ***Адлер А.*** Наука жить. Киев: Port-Royal. 1997. էջ 112-113.

լանդը, Ջ. Աթկինսոնը, Ռ. Կլարկը և Ե. Լովելը[1]: Համաձայն այս դասակարգման՝ նրանցից յուրաքանչյուրի տարածվածությունը կուսակցական լիդերի անձի կառուցվածքում որոշակի ազդեցություն կթողնի նրա քաղաքական վարքագծի վրա: Այսպիսով, օրինակ, *հաջողության հասնելու* շարժառիթ ունեցող անհատը հաճախ ձգտում է իշխանության՝ իր նպատակները այդ կերպ իրագործելու համար: Այս տեսակի անձինք հակված են չափավոր ռիսկի՝ աշխատանքի մեջ բարձր չափանիշներ սահմանելով և ցուցաբերելով մեծ էներգիա, հաստատակամություն և կայուն կամք: Նման լիդերները որպես իրենց օգնական սովորաբար ընտրում են ոչ թե իրենց ընկերներին, այլ արհեստավարժ փորձագետների, քանի որ նրանց բնորոշ է հստակ արդյունքներ ստանալու ցանկությունը: Միևնույն ժամանակ, ինչպես նշում են **Դ. Մաքքլելլանդը և Ջ. Աթկինսոնը**, այս շարժառիթով անձինք կարող են ձգտել հաջողության կամ առնվազն միտված լինել ձախողումից խուսափելուն[2]:

Սովորաբար լիդերները, որոնք ունեն պատկանելության դրդապատճառ, հաճախ գործում են ուրիշների հավանությանն արժանանալու շարժառիթով: Նրանց անհրաժեշտ է զգալ, որ իրենք պատկանում են մի կոնկրետ խմբի՝ ուրիշների հետ ունենալով առանց կոնֆլիկտների հարաբերություններ: Նման լիդերներին բնորոշ է երկխոսության դրսևորման խիստ արժևորումը: Ի վերջո, ինչպես նշում է Հ. Հեքհաուսեն իր աշխատություններում, իշխանության շարժառիթ ունեցող կուսակցական լիդերները ձգտում են ամեն գնով վերահսկել իրավիճակն ու մարդկանց, ազդել նրանց որոշումների վրա և կառավարել: Նրանք հակված են հակամարտությունների և ռազմական գործողությունների: Նրանց էությունը իշխանության աղբյուրներ ձեռք բերելու և պահպանելու մեջ է[3]:

Հիմնահարցի պարզաբանման կարևոր բաղադրիչներ են համարվում լիդերների դրդապատճառային վարքի ոճերը և միջանձնային հարաբերությունները: Ըստ **Լ.Էթերիջի** տիպաբանության՝ գոյություն ունեն միջանձնային հարաբերությունների չորս ոճեր, որոնք կապված են շփվելու բավական բարձր մակարդակի և անհատի գերակայության հետ[4]: *Կուսակցական լիդերները, որոնց* դրդապատճառային *վարքում գերակշռում է իշխանության հասնելու շարժառիթը*, որպես կանոն, գերակայության բարձր մակարդակ ունեն: Բարձր շփվողականություն ունեցող լիդերների դեպքում այս մարդիկ վստահություն են ցուցաբերում հաղորդակցության և իրենց գործողությունների նկատմամբ, հակված են լայն սոցիալական շփումների և ակտիվ են փոխելու գոյություն ունեցող հարաբերությունները: *Ինչ վերաբերում է գերակայության բարձր մակարդակ ունեցող զուսպ լիդերներին*, ապա ընդհակառակը, նրանք զսպվածություն են ցուցաբերում և բավական կոշտ արգելքներ են դնում իրենց առջև: Քաղաքականության մեջ այդ մարդիկ հակված են ստեղծելու տարբեր տեսակի դաշինքներ՝ իրենց ընդդիմախոսներին բացառելով դրանցից: Եթե քաղաքական գործիչն ունի երկչոտ հատկանիշներ, ա-

---

[1] Տե՛ս ***McClelland D., Atkinson J., Clark R., Lowell E.*** The Achievement Motive. New York: Appleton-Century-Crofts, 1953.

[2] Տե՛ս նույն տեղում

[3] Տե՛ս **Heckhausen H**. The Anatomy of Achievement Motivation. New York: Academic Press, 1967.

[4] Տե՛ս **Etheredge L.S.** Personality Effects on American Foreign Policy, 1896-1968: A Test of Interpersonal Generalization Theory // American Political Science Review. 1978. Vol. 78. No. 2. էջ 443-451.

պա նրան բնորոշ է հեռավորության պահպանումը, անվճռականությունը և այլն: Խոսելով վարքաոճի տեսակների մասին՝ հարկ է անդրադառնալ **Հ.Լասուելի** դասակարգմանը, ով առանձնացրել է քաղաքական գործիչների հետևյալ դասակարգումը՝ *գործիչ-ագիտատորներ, ադմինիստրատորներ և տեսաբաններ*[1]: Ինչպես անունն է ենթադրում, նրանցից առաջինները հակված են ելույթներ ունենալու և ակտիվ հասարակական գործունեությամբ զբաղվելու: Քաղաքական գործիչների այս տեսակը, ի տարբերություն վարչարար լիդերների, այդքան էլ հակված չէ կազմակերպչական առաջադրանքներ կատարելուն: Լիդեր-ագիտատորները օժտված են արտաքին հմայքով, համոզելու ունակությամբ, հռետորական ձիրքով: Այսպիսի լիդերները շատ հեշտությամբ են հասարակությանը տրամադրում դեպի իրենց հայացքները և բանավեճերում միշտ հաղթած են դուրս գալիս: Ադմինիստրատիվ լիդերները ավելի շատ օժտված են կազմակերպչական ունակություններով: Նրանք փայլուն վարչարարներ են, այսպես կոչված թոփ-մենեջերներ, որոնք աշխատանքի ճիշտ կազմակերպման և կարգապահության շնորհիվ կարող են հասնել մեծ արդյունքների: Նրանք գերադասում են մնալ ստվերում, սակայն կառավարում են իրավիճակը և իշխանական բոլոր լծակները պահում են իրենց ձեռքում: Տեսաբան-լիդերները ունեն հզոր ինտելեկտուալ ունակություններ: Նրանք հասարակությանը մատուցում են նոր գաղափարներ, մշակում են ամբողջական գաղափարախոսություններ և մարդկանց վրա իրենց ազդեցությունն ապահովում են իրենց հզոր ինտելեկտի շնորհիվ:

Հաջորդ կարևոր անձնական բաղադրիչը, որը դրսևորվում է լիդերի սոցիալական դրդապատճառներին արձագանքելու համատեքստում, նրա *ինքնագնահատականն* է: Ընկալվելով որպես հաջողության և ձգտման ցանկությունների հարաբերակցություն՝ այս բաղադրիչը, որպես կանոն, կարող է ինչպես գերագնահատվել, այնպես էլ թերագնահատվել: Առաջին դեպքում անհատը տիրապետում է բավական բարձր ներքին չափանիշների, որոնց վրա էլ հիմնվում է որոշում կայացնելիս, ինչն, իր հերթին, հաճախ հանգեցնում է փոփոխությունների արձագանքման ցածր օպերատիվության: Ինչ վերաբերում է դեպքին, երբ քաղաքական գործչի ինքնագնահատականը թերագնահատվում է, նա դառնում է առավել ուշադիր, ինչը ենթադրում է բավական բարձր ռեակտիվություն: **Ն.Մ. Ռակիտյանսկին** կարծում էր, որ նկարագրված բաղադրիչը պետք է համալրվի ինքնահայեցակարգով, որը ձևավորվում է այլ մարդկանց հետ համեմատելիս և հասկացվում է որպես «*իր մասին քաղաքական հարաբերությունների առարկայի ներկայացման համեմատաբար կայուն գիտակցական համակարգի զարգացման գործընթացն ու արդյունքը*»[2] : Ըստ **Դ. Վ. Օլշանսկիի**, սա ոչ միայն իր՝ որպես քաղաքականության դերակատարի գիտակցումն է, այլ նաև իր դերի, նպատակների, շահերի, իդեալների և վարքագծի դրդապատճառների ամբողջական գնահատումը[3]: Ինքնորոշման հայեցակարգը կարող է լինել պարզ կամ բարդ, ինչը թույլ է տալիս գնահատել լիդերի (տվյալ դեպքում կուսակցական լիդերի)՝ որոշակի իրադարձությունների մասին տեղեկատվություն հավաքելու և ընկալելու կարողությունն ու ցանկությունը: Այսպի-

---

[1] Տե՛ս **Lasswell H**. Psychopathology and Politics. Chicago: University of Chicago Press, 1986.

[2] Տե՛ս ***Ракитянский Н.М***. Личность политика: теория и методология психологического портретирования. М.: Изд-во Московского университета, 2011. էջ 79.

[3] Տե՛ս ***Ольшанский Д.В.*** Политическая психология. СПб.: Питер, 2002. էջ 175.

սով, բարդ ինքնորոշման հասկացության հետևանքը մարդու ցանկությունն է ստանալ համապարփակ տեղեկատվություն իրեն հետաքրքրող հարցի վերաբերյալ: Բարդ ինքնորոշման ցածր մակարդակը, ընդհակառակը, հանգեցնում է քաղաքական գործողության հետևանքների և սուբյեկտի հետադարձ կապի խախտման, ինչպես նաև սեփական ընթացքին արձագանքելու հետաքրքրության բացակայությանը:

Լիդերի անհատական կառուցվածքի նշված տարրերը թույլ են տալիս, եթե ոչ ամբողջությամբ, ապա բավարար չափով նկարագրել նրան, վերլուծելու կամ կանխատեսելու նրա գործողությունները քաղաքական ասպարեզում կամ գնահատելու նրա հնարավորությունները հետագայում: Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարող ենք անել *հետևյալ եզրակացությունները*. Կուսակցական միավորումների ամենահայտնի ներկայացուցիչները՝ կուսակցական լիդերները, իրենց դրդապատճառային պրոֆիլում ունեն *իշխանության ընդգծված պատճառ*, որին հաջորդում է *նվաճումների շարժառիթը*: Առաջինի գերակայությունը հանգեցնում է քաղաքական գործչի շուրջ կոնֆլիկտային ու ապակառուցողական իրավիճակների առաջացման, որոնք անընդունելի են բարձրաստիճան պաշտոնյայի գործունեության համար: Չնայած վատ զարգացած պատկանելության շարժառիթին, շարժառիթների այս համադրությունը, այնուամենայնիվ, թույլ է տալիս նրանց հաջողությամբ ուղղահայաց ինտեգրվելու իշխանության մեջ: Միևնույն ժամանակ, գերագնահատված ինքնագնահատականը բացառում է ուժային շարժառիթների անհրաժեշտ գործիքային բնույթը՝ թուլացնելով լիդերի արձագանքը սոցիալական դրդապատճառներին:

Կուսակցական լիդերի գործառույթները

Կուսակցական լիդերը՝ որպես քաղաքական համակարգի կարևորագույն տարր հանդիսացող քաղաքական կուսակցությունների բարձրագույն ներկայացուցիչ, իրականացնում է նաև որոշակի գործառույթներ, որոնք կարևոր են վերոնշյալ հիմնախնդրի պարզաբանման համար: Կուսակցական լիդերի դերի հիմնական բարդությունը նրա գործունեության բազմազանությունն է: Կուսակցությունը մեծ և բարդ կազմակերպություն է, որն ունի տարբեր և հաճախ հակասական հարաբերություններ տարբեր հասարակական և քաղաքական կազմակերպությունների հետ: Այսպիսով, լիդերի կողմից իրականացվող ընդհանուր ղեկավարումը կարևոր **կառավարչական գործառույթ** է, որն ապահովում է կուսակցության անխափան գործունեությունը դեպի սահմանված նպատակներ: Այս կառավարչական գործառույթի հիմնական դժվարությունն այն է, որ այն եզակի է և չի կարող տարրալուծվել շատ այլ ավելի պարզ գործառույթների հետ: Բոլոր դեպքերում, յուրաքանչյուր քաղաքական կուսակցության և կազմակերպության գործողությունները կարող են տարբեր լինել, յուրաքանչյուրը շարժվում է իր ճանապարհով դեպի նախատեսված նպատակները, բայց ընդհանուր արվեստը արդյունավետ կառավարման մեջ է: Այսպիսով, կուսակցական լիդերի առաջին գործառույթը նրա ռազմավարական մակարդակի կառավարումն է: Սա նշանակում է, որ նա պետք է կարողանա լուծել այնպիսի խնդիրներ, որոնք չունեն հստակ սահմանում, և որոնց ձևակերպումը բավականաչափ բարդ է՝ կախված արտաքին և ներքին միջավայրի պայմանների փոփոխություններից: Կարծում ենք, որ կուսակցական լիդերը չի կարող արդյունավետորեն իրականացնել կուսակցության գործունեությունը առանց իրեն ուղեկցող խմբի, քանի որ կուսակցության ղեկավարության հետ կապված տեղեկատ-

վության ծավալը չափազանց մեծ է: Այս առումով, կուսակցական լիդերի կարևորագույն գործառույթներից է հանդիսանում լիդերի **կարողությունը ստեղծել իրեն աջակցող և հավատարիմ մարդկանց խումբ**, որը առավելագույնս կաջակցի կուսակցական կառավարման գործընթացում: Կուսակցական լիդերի երրորդ գործառույթը ամենօրյա վարչական աշխատանքի **կազմակերպչական գործառույթն** է, որն ապահովում է ընթացիկ խնդիրների լուծումը: Եթե համախոհները կատարում են լիդերի կողմից իրենց տրված հանձնարարությունները, ապա կազմակերպչական գործառույթը թույլ է տալիս ճիշտ մարդկանց ճիշտ տեղերում տեղավորել:

Հաշվի առնելով քաղաքական մրցապայքարում լիդերների անհատական հատկանիշների և արտաքին տեսքի նշանակությունը՝ հարկ ենք համարում առանձնացնել նաև կուսակցական լիդերի կերպարի **ներկայացուցչական գործառույթը**: Կուսակցական լիդերը կուսակցության միասնական կերպարն է, դեմքը, և նայելով նրան՝ յուրաքանչյուր ընտրող իր համար ստեղծում է կուսակցության ներքին բնութագիրը: Սա ոչ թե ռացիոնալ, այլ էմոցիոնալ ազդեցություն է ընտրողների վրա: Այլ կերպ ասած, կուսակցական լիդերին հարկավոր է ունենալ այնպիսի ներկայանալի կերպար, որը հասարակական լայն զանգվածների հետ շփումների արդյունքում հնարավորություն տա ազատորեն հաղթահարել «հոգեբանական պատյանը»՝ յուրաքանչյուր անհատի մեջ ձևավորելով դրական պատկեր իր կուսակցության վերաբերյալ: Մասնագիտական գրականության մեջ հատկապես առանձնացվում են անմանօրինակ այնպիսի հասարաքաղաքական գործիչներ, ինչպիսիք էին Վլադիմիր Լենինը, Լև Տրոցկին, Ադոլֆ Հիտլերը, Ֆիդել Կաստրոն, Ջոն Քենեդին:

Կուսակցական լիդերի կարևորագույն գործառույթներից ենք համարում նաև մարտահրավերներին **ժամանակին և արդյունավետ արձագանքելու գործառույթը**: Այս առումով կուսակցական լիդերը պետք է հասկանա ժամանակակից աշխարհաքաղաքական իրադրությունը, որը տեղի է ունենում տնտեսության գլոբալացման, էներգետիկայի և հաղորդակցության զարգացման համատեքստում: Ամերիկայի նախագահների կերպարի ստեղծող **Դեյվիդ Հերգեն** ասել է. «*Ես նրանց չպետք է ասեմ. ահա թե ինչ պետք է անեն առաջիկա երեք օրվա ընթացքում: Պետք է ասեմ՝ ահա ձեր տարբերակները, դուք պետք է ներկայացնեք հետևանքները և ընտրեք*»: Իհարկե, կուսակցական լիդերը չի կարող ամեն ինչ իմանալ, որոշ դեպքերում ստիպված է վստահել իր թիմի փորձագետների խորհուրդներին ու առաջարկություններին: Բայց ամեն դեպքում, բոլոր գործողությունների համար պատասխանատուն լիդերն է: Ոչ ոքի չի հետաքրքրում, թե ինչպես է նա եկել իր որոշմանը, ով է օգնել իրեն և ինչ նպատակներ է ունեցել: Եթե որոշումը կայացնում է լիդերը, ապա այն դառնում է ամբողջ կուսակցության որոշումը: Այս առումով ուշագրավ է նշել **Մ. Վեբերի** խոսքերը. «*Քաղաքականության ոլորտում գոյություն ունի մահացու մեղքի միայն երկու տեսակ՝ խուսափում հարցի էությունից և, որը հաճախ, բայց ոչ միշտ նույնն է, անպատասխանատվությունը*»:

Եզրակացություն

Այսպիսով՝ կուսակցության լիդերների անձնական բնութագրերի ընդհանրացված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ քաղաքական էլիտայի այս կատեգորիայի ամենավառ ներկայացուցիչների մեջ գերակշռում են անձնային հատկանիշները, որոնք մարդկանց մեջ համակրանք և հարգանք են առաջացնում՝ իշխանության շար-

ժառիթը, բարձր ինքնագնահատականը և շփվողականությունը: Այսպիսով, կուսակցական լիդերությունը անհատից պահանջում է խարիզմատիկ որակներ և վառ արտահայտված անհատական հատկանիշներ: Այս ամենի բացակայության դեպքում կուսակցությունը կարող է մոլորվել խայտաբղետ քաղաքական մրցապայքարում, ինչի մասին է վկայում կուսակցական լիդերների անհատական վերլուծության համեմատությունը բնակչության պատկերացումների հետ՝ լիդերների ուժի, ազդեցության և իրենց կուսակցությունների ժողովրդականության մասին[1]: Կուսակցական լիդերների տվյալ ուսումնասիրության առաջարկվող հայեցակարգը, իհարկե, կարող է տարածվել այլ տիպի ղեկավարների վրա, սակայն կարևորն այն է, որ այն թույլ է տալիս լուծել հիմնականում գործնական բնույթի հարցեր, մասնավորապես՝ կուսակցական լիդերի՝ քաղաքական էլիտայում հավաքագրման համակարգի օպտիմալացման ռազմավարությունների մշակման վերաբերյալ:

Պետք է փաստենք, որ կուսակցական լիդերը, որպես քաղաքական գիտության հետազոտության առարկա, իր կարևոր և ազդեցիկ դերն ունի ոչ միայն քաղաքական լիդերության մեջ որպես նրա բաղկացուցիչ տարր, այլ նաև քաղաքական մրցապայքարում, որտեղ հաջողության հասնելու համար կարևորվում են նրա անհատական հատկանիշները և իրականացվող գործառույթները: Հենց դրանց տիրապետման և անխափան իրագործման արդյունքում է, որ կուսակցական լիդերը կարողանում է իր շուրջը համախմբել կուսակցական համակիրներին ու ընտրազանգվածին և մղել դեպի համատեղ շահերի բավարարմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Шестопал Е.Б., Селезневой А.В. Современная элита России: Политико-психологический анализ. М.: АРГАМАК-МЕДИА, 2015.
2. Михельс Р. Социология политической партии в условиях демократии // Диалог. 1990. № 9.
3. Ошкин В.В. Трансформация требований к партийным лидерам (на примере творческого наследия Р. Михельса) // Симбирский научный вестник. 2012. № 4 (10).
4. Ольшанский Д.В. Основы политической психологии. Екатеринбург: Деловая книга, 2001.
5. Burns J.M. Leadership. New York: Harper & Row, 1978.
6. Ракитянский Н.М. Личность политика: теория и методология психологического портретирования. М.: Изд-во Московского университета, 2011.
7. Ильин Е.П. Мотивация и мотивы. СПб.: Питер, 2000.
8. Hermann M.G. Ingredients of Leadership // Political Psychology. Contemporary Problems and Issues / Ed. M.G. Hermann. San Francisco: Jossey-Bass, 1986. .
9. Фрейд З. Психология бессознательного. М.: Просвещение, 1990.: Адлер А. Наука жить. Киев: Port-Royal. 1997.

[1] Տե՛ս- ***Палитай И.С., Затонских А.В***. Особенности восприятия современных российских политических партий // Вестник Московского университета. Серия 12. Политические науки. 2012. № 2. էջ 83-95.

10. McClellandD., Atkinson J., Clark R., Lowell E. The Achievement Motive. New York: Appleton-Century-Crofts, 1953.
11. Heckhausen H. The Anatomy of Achievement Motivation. New York: Academic Press, 1967.
12. Etheredge L.S. Personality Effects on American Foreign Policy, 1896-1968: A Test of Interpersonal Generalization Theory // American Political Science Review. 1978. Vol. 78. No. 2.
13. Lasswell H. Psychopathology and Politics. Chicago: University of Chicago Press, 1986.
14. Ольшанский Д.В. Политическая психология. СПб.: Питер, 2002.
15. Палитай И.С., Затонских А.В. Особенности восприятия современных российских политических партий // Вестник Московского университета. Серия 12. Политические науки. 2012. № 2.

REFERENCES

1. Burns J.M. Leadership. New York: Harper & Row, 1978.
2. Etheredge L.S. Personality Effects on American Foreign Policy, 1896-1968: A Test of Interpersonal Generalization Theory // American Political Science Review. 1978. Vol. 78. No. 2.
3. Freud Z. Psychology of the unconscious. M.: Enlightenment, 1990.: Adler A. Science to live. Kyiv: Port-Royal. 1997.
4. Heckhausen H. The Anatomy of Achievement Motivation. New York: Academic Press, 1967.
5. Hermann M.G. Ingredients of Leadership // Political Psychology. Contemporary Problems and Issues / Ed. M.G. Hermann. San Francisco: Jossey-Bass, 1986. Ilyin E.P. Motivation and motives. St. Petersburg: 2000.
6. Lasswell H. Psychopathology and Politics. Chicago: University of Chicago Press, 1986.
7. McClelland D., Atkinson J., Clark R., Lowell E. The Achievement Motive. New York: Appleton-Century-Crofts, 1953.
8. Michels R. Sociology of a Political Party in a Democracy // Dialogue. 1990. No. 9.
9. Olshansky D.V. Fundamentals of political psychology. Yekaterinburg: Business book, 2001.
10. Olshansky D.V. Political psychology. St. Petersburg: Piter, 2002. p. 175.
11. Oshkin V.V. Transformation of requirements for party leaders (on the example of the creative heritage of R. Michels) // Simbirsk Scientific Bulletin. 2012. No. 4 (10). p. 169-172.
12. Palitai I.S., Zatonskikh A.V. Peculiarities of perception of modern Russian political parties // Bulletin of Moscow University. Series 12. Political sciences. 2012. No. 2.
13. Rakityansky N.M. Politician's Personality: Theory and Methodology of Psychological Portraiture. M.: Publishing House of Moscow University, 2011.
14. Shestopal E.B., Selezneva A.V. The Modern Elite of Russia: Political and Psychological Analysis. M.: ARGAMAK-MEDIA, 2015.

РЕЗЮМЕ

Личные качества лидера партии и функции

Погосян Ваге

Ереванский государственный университет,
факультет международных отношений, Аспирант
эксперт историко-политического аналитического центра «Зоравар Сепух»
Ереван, Республика Армения

В политологической литературе очень мало исследований, посвященных понятию «партийное лидерство». Постепенно возрастает значение партийных лидеров как составного элемента политического руководства в политической жизни. Доказательством этого является то, что политические партии, являясь одним из ключевых субъектов политических систем и процессов, почти всегда имеют партийного лидера, личность, которая благодаря своим характеристикам и харизме способна повести за собой политическую партию и ее последователей. В этом смысле очень важно уточнение вопроса о личностных характеристиках партийного лидера и выполняемых им функциях.

Ключевые слова: партийный лидер, политический институт, политическая партия, правительство, электорат, политическая элита, функция.

SUMMARY

Personal Qualities of the Party Leader and Functions

Poghosyan Vahe

Yerevan State University,
Faculty of International Relations
Ph.D.Student
Expert of the Historical and Political Analytical Center "Zoravar Sepukh"
Yerevan, Armenia

In the political science literature, there are very few studies devoted to the concept of “party leadership”. The importance of party leaders as an integral element of political leadership in political life is gradually increasing. The proof of this is that political parties, being one of the key subjects of political systems and processes, almost always have a party leader, a person who, thanks to his characteristics and charisma, is able to lead a political party and its followers. In this sense, it is very important to clarify the question of the personal characteristics of the party leader and the functions performed by him.

Keywords: party leader, political institution, political party, government, electorate, political elite, function.